

**Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ. Ալեքսանյանը հանդիպեց <<Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի>> փոխտնօրեն Տեր Գարեգին արքեպիսկոպոսի Համբարձումյանի հետ**

13.05.2015թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը հանդիպել է <<Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի>> փոխտնօրեն Տեր Գարեգին արքեպիսկոպոսի Համբարձումյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերին առնչվող, ինչպես նաև դրանց հետագա իրականացման հետ կապված հարցեր:

Հ. Ալեքսանյանն իր երախտագիտությունը հայտնեց մարզի դպրոցների նկատմամբ ցուցաբերած հոգածության համար և պատրաստակամություն հայտնեց օժանդակելու կենտրոնի բոլոր ծրագրերին ու նախաձեռնություններին:

Տեր Գարեգին արքեպիսկոպոսի Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզում <<Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի>> կողմից իրականացվող ծրագրերին մշտական աջակցության համար և հույս հայտնեց, որ այսուհետ քրիստոնեական արժեհամակարգի ամրապնդմանն ուղղված իրենց առաքելությունն էլ ավելի կզորանա Սյունիքում:

